

Պետական դրամաշնորհներ՝ հավակնոտ գիտական նախագծերի համար



ՀՀ Գիտության կոմիտեն առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների մրցույթ է հայտարարել, որն աննախադեպ է տրամադրվող գումարների եւ ծրագրերի իրականացման ժամկետների, ինչպես նաեւ խմբում ներգրավված գիտաշխատողների թվի եւ նրանց վարձատրության առումով: [Մրցույթի հայտերն ընդունվում են մինչեւ 2021 թ. հունիսի 18-ը ներառյալ:](#)

Մեդիամաքսը փորձել է պարզել, թե ինչ հնարավորություններ է տալիս ծրագիրն ու ինչ խնդիրներ կարող է լուծել:

Պայմանների մասին

Հայաստանում գործող առաջատար գիտաշխատողների ղեկավարությամբ գիտահետազոտական խմբերին կտրամադրվեն մինչեւ 5 տարի տեւողությամբ դրամաշնորհներ՝ հավակնոտ եւ բեկումնային գիտական նախագծերի իրականացման համար, որոնք միտված են նաեւ գիտական կադրերի պատրաստմանն ու երիտասարդների ներգրավմանը:

«Նմանատիպ մրցույթներ ԵՄ երկրներում անցկացվում են, եւ հնարավորություն են տալիս, որ մինչեւ 10 տարվա լավ ակադեմիական հետազոտ ունեցող ակտիվ գիտաշխատողները նոր խմբեր ձեւավորեն կամ առկա խմբերն ամրապնդեն: Նպատակներից մեկը նոր կադրերի պատրաստումն է եւ գիտության երիտասարդացումը», - **Մեդիամաքսի** հետ զրույցում ասել է Գիտության կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Մովսիսյանը:



Արթուր Մովսիսյանը

Խմբերը պետք է բաղկացած լինեն 6-7 անձից, նախագծի մեկնարկից մեկ տարի անց խմբի ղեկավարը հնարավորություն կունենա ներգրավելու լրացուցիչ երկու՝ թեմային առնչվող մասնագիտությամբ ուսանող: Մանրամասները հասանելի են մրցույթի [հրավերի փաթեթում](#):

«Մրցույթին հայտ կարող են ներկայացնել գիտական բոլոր բնագավառներից, բայց շատ կարևոր է նշել, որ բոլոր հայտերը պետք է լինեն հավակնոտ, բեկումնային եւ գիտական կադրերի պատրաստմանը միտված: Մասնագիտական փորձագիտական խորհուրդ է ձևավորվելու, որը փորձելու է, այսպես ասած, «կենացին» մոտ հայտերը գնահատել՝ կոնկրետ չափանիշներով: Խմբերը նաև հարցազրույցի փուլ են անցնելու»,- ասել է Գիտության կոմիտեի փոխնախագահը:

Բյուջեի մասին

Ծրագրով սահմանված է, թե գիտական խումբը յուրաքանչյուր տարվա համար որքան ֆինանսավորում է ստանալու: Ընդհանուր 5 տարվա համար նախատեսված բյուջեն 156 մլն դրամ է: Թեմայի ֆինանսավորման առավելագույն չափը մեկնարկային տարվա (առաջին 12 ամսվա) համար 7 անձից բաղկացած խմբերի համար սահմանվել է 43 մլն 200 հազար դրամ, 6 անձից բաղկացած խմբերի համար՝ 39 մլն 600 հազար դրամ:

Առաջին տարվա համար նաև լրացուցիչ նախատեսվում է մինչև 15 մլն դրամի չափով միանվագ գումար հատկացնել, որը կարող է ուղղվել կահավորմանը, սարքավորումներին եւ նմանատիպ այլ ծախսերին:



Թեմայի ֆինանսավորման առավելագույն չափը հաջորդ տարիներին 7 անձից բաղկացած խմբերի համար սահմանված է 28 մլն 200 հազար դրամ, 6 անձից բաղկացած խմբերի

համար՝ 24 մլն 600 հազար դրամ: Նախագծի մեկնարկից մեկ տարի անց խմբում ուսանող ներգրավելու դեպքում թեմայի ֆինանսավորումը, համապատասխանաբար, կավելացվի:

Խմբերի առջև դրված պարտադիր պահանջներից են թեմայի իրականացման ընթացքում միջազգային հեղինակավոր ամսագրերում հրապարակումներն ու միջազգային հետազոտական դրամաշնորհների ներգրավումը (ակնկալվում է 30 մլն ՀՀ դրամը գերազանցող միջազգային գիտական դրամաշնորհի առնվազն մեկ դիմում), թեմային առնչվող գիտահանրամատչելի նյութերի ստեղծումն ու տարածումը:

Նախագծի մեկնարկից 3 տարի անց՝ խմբի եռամյա գործունեության արդյունքները գնահատելուց հետո, կորոշվի թեմայի ֆինանսավորումը եւս երկու տարի շարունակելու նպատակահարմարությունը:

Կոմիտեի ակնկալիքների մասին

Գիտության կոմիտեի ղեկավար Արթուր Մովսիսյանը՝ խոսելով ծրագրից ակնկալիքների մասին, ասում է, որ «պետք է կտրվել այն մտայնությունից, որ գիտնականը պետք է քիչ վաստակի»:

«Մենք պետք է տանք այն ուղին, այն տեսլականը, որ Հայաստանում միջազգային մրցունակ գիտությամբ զբաղվելու պարագայում կարելի է նորմալ գումարներ վաստակել: Մյուս կողմից՝ մենք նշել ենք, թե ինչ տիպի գիտական արդյունքներ ենք ուզում տեսնել եւ որն ենք համարում գիտական արդյունք, եւ այդ առումով ակնկալում ենք, որ միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում տպագրությունների քանակն աճելու է»,- ասել է նա:



Արթուր Մովսիսյանը եւ Սարգիս Հայոցյանը

Արթուր Մովսիսյանը նշել է, որ Գիտության կոմիտեի կողմից իրականացվող ասպիրանտների, գիտական խմբերի մեկնարկի, լաբորատորիաների ամրապնդման եւ առաջատար գիտական խմբերի դրամաշնորհների տրամադրման մրցույթները համակարգաստեղծ են համարում:

«Դրանք տարբերվում են սովորական դրամաշնորհից, որովհետեւ աշխարհի մակարդակով մրցունակ ուղղություններով նոր խմբերի, լաբորատորիաների ստեղծմանը եւ ուժեղացմանն են միտված: Դրանով մենք համակարգում ստեղծում ենք բյուրեղացման կենտրոններ, որոնց շուրջը համակարգը կարող է ձգվել եւ բարձրանալ»,- ասել է Արթուր Մովսիսյանը:

Գիտնականների ակնկալիքների մասին

ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրեն Լիլիթ Սահակյանը նշել է, որ գիտական հանրության մեջ նմանատիպ մրցույթներն ակտիվություն են բերում, որովհետև ոչ միայն լրացուցիչ ֆինանսավորում ստանալու աղբյուր են, այլև գիտական գաղափարները կյանքի կոչելի լավ հնարավորություն:



Լիլիթ Սահակյանը

«Շատ հաճախ ծրագրից ծրագիր անցումն անընդհատ սթրեսային իրավիճակ է ստեղծում, բայց մենք ցանկացած մրցույթ դիտարկում ենք որպես նոր հնարավորություն եւ ձգտում ենք բաց չթողնել: Իհարկե, ամեն ծրագիր ունի լավ եւ վատ կողմեր, որոնք կարելի է քննարկել: Պահանջները, մեր կարծիքով, շատ ավելի խիստ են դրված, քան ֆինանսավորումն է, միշտ քիչ է, չէ՞ (ծիծաղում է,- հեղ.): Ես միշտ ասում եմ՝ եթե որպես գիտնական իմ աշխատավարձի կողքը երկու-երեք զրո ավելացնեն, ես կլինեմ մի քիչ ավելի երջանիկ քաղաքացի, բայց գիտնականն իրեն երջանիկ է զգում, երբ ունի լավ ենթակառուցվածքներ, եւ որ այդ ամենն ունենալու համար ոչ թե բազմաթիվ մրցույթների է մասնակցում, այլ գիտի, որ իր հետազոտության համար անհրաժեշտ բոլոր պայմանները, հնարավորության սահմաններում, կունենա», - ասել է Լիլիթ Սահակյանը:

Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի աշխատանքներում ներգրավված երիտասարդ գիտնականների թիվը մեծ է, եւ այդ առումով Գիտության կոմիտեի պահանջներն ու կենտրոնի հնարավորությունները համընկնում են, բայց կան նաեւ հարցեր, որոնց քննարկման անհրաժեշտությունը տեսնում է Լիլիթ Սահակյանը:

«Այն սահմանափակումը, որ բակալավրիատից ուսանող չենք կարող վերցնել, մեզ նման երիտասարդ կազմ ունեցող կենտրոնի համար լավ չէ, որովհետև ունենք բակալավրիատի ուսանողներ, որոնց արդեն «վարակել» ենք հետազոտություններով, բայց իրենց ոչ մի ծրագրի մեջ չենք կարող ենք ներգրավել: Հուսով եմ, որոշակի շտկումներ կլինեն, որովհետև ուսանողներին վաղ շրջանից պետք է ոգեւորել եւ բերել գիտություն», - ասել է կենտրոնի տնօրենը:

Գոյության խնդրի մասին

Այսպիսի ծրագրերը շատ լավ են, բայց գիտնականները ռադիկալ փոփոխությունների անհրաժեշտության մասին են ընդգծում:

ԵՂՀ Ֆիզիկայի ֆակուլտետի տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչ Արամ Սահարյանը, ով ժամանակին աշխատել է կոմիտեում որպես գիտական քաղաքականության վարչության

պետ, ասում է, որ նման մրցույթը վաղուց սպասված էր, պլաններ կային, բայց ֆինանսավորում չունեին:

«Դա թույլ կտա գիտական խմբերին քիչ թե շատ հեռանկարային պլաններ կազմել: Կարելի է զլոբալ խնդիրներ դնել եւ ավելի մեծ թիվ կազմել: Հիմնական խնդիրն այսօր ներուժը Հայաստանում պահելն է, դժվարանում ենք երիտասարդներին պահել, որովհետեւ ֆինանսավորումը շատ ցածր է: Ասպիրանտները, պաշտպանելուց հետո աշխատանքի խնդիր ունեն, եւ մենք կանգնում ենք պատրաստված կադրերին կորցնելու վտանգի առաջ: Արտասահմանում մեծ հաճույքով ընդունում են նրանց, որովհետեւ այդ մակարդակի մասնագետ պատրաստելու համար մեծ գումարներ պետք է ներդնեն, բայց փաստացի պատրաստի մասնագետ են ստանում»,- ասել է նա:



Արամ Սահարյանը

Արամ Սահարյանը հույս է հայտնել, որ նման ծրագրերը հետագայում ավելի կընդլայնվեն եւ երիտասարդներին արժանապատիվ վարձատրության հնարավորություններ կընձեռեն:

«Ցավոք, նման ֆինանսավորումները չեն կարող գիտության գոյության հարցը լուծել, իսկ այսօր գիտության գոյության հարցն է դրված: Այն դպրոցները, որ ստեղծվել էին Խորհրդային Միության ժամանակ եւ առաջատար գիտնականները, որ դրանց հիմքն էին կազմում, այսօր կամաց-կամաց ասպարեզից դուրս են գալիս, նրանց փոխարինող է պետք: Հույսը այն է, որ եթե այստեղ պայմաններն ինչ-որ չափով համեմատելի դառնան արտասահմանի հետ, որոշ կադրերի կկարողանանք վերադարձնել, իսկ նոր կադրերին՝ պահել երկում»,- ասել է Ֆիզիկայի ամբիոնի վարիչը:

Մարի Թարյան

Լուսանկարները՝ Էմին Արիստակեսյանի